8437

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ Ա. ՄԱՔՄԱՆՅԱՆ

«17» 06 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0106-21

Ձեռնարկողը՝ **«ՌՌՌ» հանքային ջրերի գործարան ՓԲԸ**
ք.Երևան, Շողրոյան 5

Գործունեությունը՝ ***Բջնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 1/67 (2-ԷԿ կրկնորդ) և 8/69 հորատանցքերից հանքային ջրի արդյունահանման աշխատանքների և «ՌՌՌ» հանքային ջրերի շշալցման գործարանի ընդլայնման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Կոտայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0106-21
<17> 06 2021թ.

Կոտայքի մարզի Բջնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 1/67 (2-ԷԿ կրկնորդ) և 8/69 հորատանցքերից հանքային ջրի արդյունահանման աշխատանքների և «ՌՌՌ» հանքային ջրերի շշալցման գործարանի ընդլայնման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ներածական մաս.

Ձեռնարկող՝	«ՌՌՌ» հանքային ջրերի գործարան ՓԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/, /Ա կատեգորիա/
Տեղադրման վայրը՝	Կոտայքի մարզ, Բջնի բնակավայր

«ՌՌՌ» հանքային ջրերի գործարան ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) նախատեսնում է երկարաձգել Բջնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 1/67 (2-ԷԿ կրկնորդ) և 8/69 հորատանցքերի արդյունահանման իրավունքը՝ արդյունաբերական (շշալցման) և ազատ ածխաթթու գազի կորզման նպատակով, 20 տարի ժամկետով:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2)-րդ կետի դ. ենթակետի, ներկայացված գործունեությունը դասակարգվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Նկարագրական մաս.

Բջնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի տարածաշրջանի Չարենցավան համայնքի Բջնի բնակավայրի տարածքում, Չարենզավան քաղաքից 10.0 կմ դեպի հյուսիս՝ Հրազդան գետի հովտում:

Հանքավայրի ածխաթթու գազի կորզման և շշալցման գործարանի տարածքի հողի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ նշանակության օբյեկտների է, իսկ օգտագործման նպատակը՝ արդյունաբերական օբյեկտների է: Հողամասի տարածքը կազմում է 7.5հա, որի վրա առկա են

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

կառուցապատված շինություններ ընդհանուր՝ 12162.9մ² մակերեսով, այդ թվում՝ շշալցման գործարանը իր արտադրական (8389.1մ²) և վարչատնտեսական (2214.1մ²) մասնաշենքերով, օժանդակ և պահեստային տնտեսություններ (1559.7մ²):

Բջնիի հանքավայրը երկրաբանական տեսակետից տեղադրված է Արզականի բյուրեղային զանգվածի սահմաններում, որի երկրաբանական կառուցվածքը կազմված է մինչքեմբրիի, պալեոզոյի, մեզոզոյի, կայնազոյի դարաշրջանի ապարներով և չորրորդական նստվածքներով:

Գեոմորֆոլոգիական տեսակետից հանքավայրի տարածքը գտնվում է Ծաղկունյաց լեռնաշղթայի հարավ-արևելյան լանջի սահմաններում, որն իրենից ներկայացնում է բյուրեղային բարձրացում խիստ մասնատված էրոզիոն-կառուցվածքային ռելիեֆով: Ռելիեֆը խիստ բարդացված է բազմաթիվ համեմատաբար նեղ և խորը Y-ա ձև կիրճերով և ձորակներով:

Հանքավայրի հիպսոմետրիկ բացարձակ նիշերը տատանվում են 1480.0-1505.0մ սահմաններում:

Շրջանի ընդհանուր հիդրոերկրաբանական պայմանների ձևավորման գործում գլխավոր դեր են կատարում կլիմայանական, երկրաձևաբանական (գեոմորֆոլոգիական) պայմանները և երկրաբանական կառուցվածքը: Շրջանի ստորերկրյա ջրերը կապված են վերը նկարագրված լեռնային ապարների գրեթե բոլոր շերտագրական (ստրատիգրաֆիական) ստվարաշերտերի հետ:

Ստորերկրյա ջրերի սնման գործում մեծ դեր են խաղում ձյան տեսքով տեղումները:

ՀՀ Կոտայքի մարզի Բջնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի հանքային ջրի և ազատ ածխաթթու գազի շահագործողական պաշարները 01.11.1970թ.-ի դրությամբ հաստատվել են ԽՍՀՄ Պաշարների Պետական Հանձնաժողովի (ՊՊՀ) կողմից (արձանագրություն թիվ 6141, 20.01.1971թ.):

Բջնիի հանքային ջրերը ածխաթթվային են (CO_2-98.0-99.6%), թույլ թթվային (pH-6.5-6.6), սիլիկատային (H_2SiO_3-109.0-180.0մգ/լ), ըստ քիմիական կազմի հիդրոկարբոնատ-նատրիումային են 4.2-6.5գ/լ հանքայնացումով և 16.1-35.5^{0}C ջերմաստիճանով:

Հանքավայրի շահագործողական պաշարները հաշվարկվել են չորս հորատանցքերով, այդ թվում.

Հանքային ջրի պաշարներ՝

1/67 հորատանցքով - B կարգի՝ 7.0 լ/վրկ կամ 604.8 մ³/օր,

3/67 հորատանցքով - B կարգի՝ 0.4 լ/վրկ կամ 34.5 մ³/օր,

8/69 հորատանցքով - B կարգի՝ 1.5 լ/վրկ կամ 129,6 մ³/օր,

9/69 հորատանցքով - B կարգի՝ 1.5 լ/վրկ կամ 129,6 մ³/օր:

Ընդամենը՝ 10.4 լ/վրկ կամ 898.5 մ³/օր:

Ազատ ածխաթթու գազի պաշարներ՝

1/67 հորատանցքով - B կարգի՝ 3.2 գ/լ կամ 2.3 մ³/մ³,

3/67 հորատանցքով - B կարգի՝ 3.7 գ/լ կամ 2.5 մ³/մ³,

8/69 հորատանցքով - B կարգի՝ 5.0 գ/լ կամ 3.8 մ³/մ³,

9/69 հորատանցքով - B կարգի՝ 3.1 գ/լ կամ 2.1 մ³/մ³:

Ընդամենը՝ 15.0 գ/լ կամ 10.7 մ³/մ³:

Ներկայումս Ընկերությունը արդյունաբերական (շշալցում) և ազատ ածխաթթու գազ է կորզում ՀՀ Կոտայքի մարզի Բջնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 1/67 (2-ԷԿ՝ 1/67-ի կրկնորդ) և 8/69 հորատանցքերից՝ համաձայն 20.10.2012թ. ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության տրամադրած արդյունահանման թույլտվությունների՝ ՇԱԹՎ-29/119, ՇԱԹՎ-29/120 և ընդերքօգտագործման պայմանագրերի՝ ՊՎ-119, ՊՎ-120:

Հորատանցքերի կոորդինատներն են՝

Հորատանցքի համարը	I. CK-42 կոորդինատների համակարգը	II. ARM WGS-84 կոորդինատների համակարգը	Հորատանցքի բացարձակ բարձրությունը, մ
2-ԷԿ (1/67-ի կրկնորդ)	X = 4480755 Y = 8470942	X = 4480748 Y = 8470840	1494.6
8/69	X = 4480713 Y = 8470644	X = 4480706 Y = 8470542	1488.7

Ընկերության տրամադրված հանքային ջրի ջրաքանակը կազմում է՝ 244600.0 մ^3/տարի (94600.0+150000.0) կամ 7.75 լ/վրկ, որից կորզվող ազատ ածխաթթու գազի ծավալը կազմում է 415468.0 մ^3/տարի:

Պահանջարկի և արտադրության աճին զուգահեռ անհրաժեշտություն է առաջացել ավելացնել շշալցման համար թիվ 1/67 (2-ԷԿ կրկնորդ) հորատանցքի հանքային ջրի քանակը՝ նախկինում տրամադրված 3լ/վ արտադրողականությունը հասցնել հաստատված 7.0 լ/վրկ չափով, ինչպես նաև հանքային ջրից կորզվող ածխաթթու գազի ծավալը, ինչի հետևանքով և նախատեսվում է ընդլայնել հանքային ջրերի շշալցման գործարանը: Գործարանում նախկինում տեղադրված սարքավորումների հզորությունները լիովին բավարարում են արտադրողականության ընդլայնման հզորությունները բավարարելու համար (7.0 լ/վրկ հանքային ջրի թույլտվություն ստացման դեպքում շշալցնել ողջ հզորությամբ):

Ընկերության կողմից պահանջվող հանքային ջրի ջրաքանակը կազմում է 268056.0 մ^3/տարի կամ 8.5 լ/վրկ, որից կորզվող ազատ ածխաթթու գազի ծավալը կազմում է 687484.8 մ^3/տարի, այդ թվում.

- թիվ 1/67 (2-ԷԿ կրկնորդ) հորատանցքից՝ 220752.0 մ^3/տարի կամ 7.0 լ/վրկ հանքային ջուր շշալցման համար, որից կորզվող ազատ ածխաթթու գազի ծավալը կազմում է 507729.6 մ^3/տարի,
- թիվ 8/69 հորատանցքից՝ 47304.0 մ^3/տարի կամ 1.5 լ/վրկ հանքային ջուր ածխաթթու գազի կորզման համար, որից կորզվող ազատ ածխաթթու գազի ծավալը կազմում է 179755.2 մ^3/տարի:

Ջրհավաք թիվ 2-ԷԿ (1/67-ի կրկնորդ) հորատանցքից դեպի շշալցման գործարան հանքային ջրի տեղափոխումն իրականացվում է 7,7 կմ երկարությամբ 100մմ տրամագծի խմելու որակի խողովակաշարով՝ պոմպի միջոցով կամ չժանգոտվող պողպատից պատրաստված 26.0տ տարողությամբ ցիստեռնով՝ ըստ արտադրողի կողմից տրված շահագործման ուղեցույցի:

Խողովակաշարը գոյություն ունեցող է և անցնում է մասամբ վերգետնյա, մասամբ՝ ստորգետնյա:

Բջնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 2-ԷԿ (1/67-ի կրկնորդ) և 8/69 հորատանցքերի հանքային ջրի արդյունավետ և պատշաճ շահագործման համար Ընկերությունը նախատեսում է իրականացնել ներքոհիշյալ աշխատանքները՝

- իրականացնել սիստեմատիկ հիդրոերկրաբանական ռեժիմային ստացիոնար մշտադիտարկումներ (մոնիտորինգ) շահագործողական հորատանցքերի շահագործման ռեժիմի և տեխնիկական վիճակի նկատմամբ:

- Ջրհավաք հորատանցքերից ջրառն իրականացնել բնական ինքնահոսի պայմաններում՝ հանքավայրի հիդրոդինամիկ և հիդրոքիմիական պայմանները խախտելուց խուսափելու համար:

Ընկերությունը 10.0լ/վրկ թողունակությամբ ջուրը վերցնում է Ալափարսից՝ համաձայն լիազոր մարմնից ստացված ջրօգտագործման թույլտվության: Աղբյուրի ջուրն օգտագործվելու է արդյունաբերական շշալցման գործընթացում:

Լաբորատորիայի և գործարանում աշխատողների տնտեսակենցաղային կարիքներն ապահովվելու են Ալափարս գյուղի խմելու ջրամատակարարման ցանցից:

Շշալցման գործարանի գործունեության ընթացում գոյացած կոմունալ-կենցաղային կեղտաջրերն ուղղվում են դեպի Չարենցավան-Երևան կոյուղու կոլեկտոր:

Արտադրական ողջ գործընթացում գործարանում առաջանում են թափոններ, որոնց կառավարումն իրականացվում է համաձայն լիազոր մարմնի կողմից ստացված թույլտվությունների:

Բջնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրում բացակայում են սողանքային երևույթները, մոտակայքում կան արդյունաբերական, բնակելի և տնտեսական շինություններ:

Ընկերությունն օգտվում է գոյություն ունեցող ավտոճանապարհից և ենթակառուցվածքներից՝ գազատար, ջրատար, էլեկտրահաղորդման գծեր և կոյուղագծեր, իսկ հանքավայրի շահագործման (շշալցման ու գազի կորզման) համար նոր օժանդակ շինությունների կառուցում չի նախատեսվում:

Ընկերությունը, հանքային ջրից շշալցման գործընթացը, կշարունակի իրականացնել Չարենցավան քաղաքում գտնվող հանքային ջրերի գործարանում, իսկ ազատ ածխաթթու գազի կորզման գործընթացը՝ Բջնի գյուղի վարչական տարածքում գտնվող ազատ ածխաթթու գազի կորզման արտադրամասում, որոնք հագեցած են անհրաժեշտ տեխնոլոգիաներով և սարքավորումներով:

Աշխատանքների կատարման ընթացքում ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, հաշվի առնելով աշխատանքների բնույթը, կլինի աննշան և չի հանգեցնի էկոհամակարգերի վրա բացասական ճնշումների դրսևորմանը:

Հանքավայրի տարածքը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում: Չեն արձանագրվել նաև ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում նշված բուսական կամ կենդանական տեսակների աճելավայրեր և ապրելավայրեր:

Ներկայացվող տեղանքում աղմուկի աղբյուր կարող են հանդիսանալ միայն ավտոտրանսպորտային միջոցները, սակայն, քանի որ դրանց երթևեկության ինտենսիվությունը շատ ցածր է, աղմուկի մակարդակը նույնպես բարձր չէ:

Նախատեսվող աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները կանխարգելելու և մեղմելու նպատակով մշակվել են բնապահպանական միջոցառումների ծրագիր ուղղված՝ վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն.

Ջրհավաք հորատանցքի արդյունավետ շահագործման հիմնական պահանջներն են՝

- Հանքային ջրի հանքավայրի արդյունավետ և երկարաժամկետ շահագործումը հնարավոր է իրականացնել միայն հորատանցքի լավ տեխնիկական վիճակի, նրանց գլխամասային սարքավորումների, չափիչ սարքերի, ինչպես նաև սանիտարական պահպանության առաջին խիստ ռեժիմի գոտու առկայության և պատշաճ վիճակում պահելու պայմաններում:
- Ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի արդյունաբերական շահագործումը պետք է իրականացնել հատուկ ջրհավաք (կապտաժային) հորատանցքից կահավորված չժանգոտվող (խմելու որակի) խողովակաշարով:

- Ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի հորատանցքի շահագործումը պետք է իրականացվի հիդրոերկրաբանական պայմաններին, հանքային ջրերի հաստատված պաշարների քանակին, նրանց քիմիական կազմին, ջերմաստիճանին և ռեժիմին խիստ համապատասխան:
- Հանքային ջրերի շահագործման ժամանակ անհրաժեշտ է ապահովել ջրերի կոնդիցիոն քիմիական կազմի պահպանումը:
- Հակավթարային միջոցառումներ:
- Անբարենպաստ կլիմայական պայմանների ժամանակ արտանետումների կարգավորման միջոցառումներ:
- Նախատեսված արդի սարքավորումների տեղադրման շնորհիվ ջրի խնայողություն՝ կբացառվի շշալցման ընթացքում ջրի վերաթափումը և կորուստը:
- Նախատեսվում է հարակից տարածքները չխախտել և չաղտոտել կենցաղայի աղբով և այլ տեսակի թափոններով:
- Իրականացնել թափոնների կառավարումը՝ համաձայն լիազոր մարմնի կողմից հաստատված նախագծի:
- Կենսաբազմազանության պահպանությանն ուղղված միջոցառումներ և այլն:

Ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրերի շահագործման ժամանակ նախատեսվում և իրականացվում են ռեժիմային դիտարկումներ, որոնց նպատակն է՝

- հանքավայրի շահագործման ժամանակ հանքային ջրի քանակի և որակի կայունության պահպանումը,
- հնարավոր սպառման և աղտոտման բացահայտումն ու նախազգուշացումը,
- ստորերկրյա հանքային ջրերի բնական ու խախտված ռեժիմների և դրանց ձևավորման օրինաչափությունների ուսումնասիրությունը,
- ստորերկրյա հանքային ջրերի ռեժիմի կարճաժամկետ ու երկարաժամկետ կանխատեսումների համար տվյալների հավաքագրումը և վերլուծությունը,
- ստորերկրյա հանքային ջրերի աղտոտման և սպառման աստիճանի գնահատման մասին հենակետային տվյալների ստացումը,
- ստորերկրյա հանքային ջրերի շահագործվող հանքավայրերում ջրի ծախսի, ճնշման կամ մակարդակի և ջերմաստիճանի չափումների, ինչպես նաև ֆիզիկաքիմիական անալիզների իրականացումը, ստորերկրյա ջրերի պաշարների վերագնահատման օպերատիվ տվյալների հավաքագրումը, մշակումը և ամփոփումը,
- ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցումը, անվերադարձ ազդեցության կանխարգելումը,
- ամփոփ տվյալների հիման վրա առաջարկությունների մշակումը և ներկայացումը լիազոր մարմնին:

ՇՄԱԳ-ում նախատեսվել են նաև միջոցառումներ, ուղղված՝ աշխատանքային միջավայրում աշխատողների անվտանգությանը, արտակարգ իրավիճակների արձագանքմանը, հնարավոր ազդեցությունների մեղմմանն ու կանխարգելմանը: Բոլոր միջոցառումներն իրենց գործողություններով ամփոփվել են բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:

Հանքային ջրերի գործարանում վնասակար նյութերի արտանետման աղբյուրներ են կաթսայական սարքավորումները: Օդային ավազան արտանետվող վնասակար նյութերն են՝ ազոտի երկօքսիդները և ածխածնի օքսիդները: ՇՄԱԳ-ում հաշվարկվել են արտանետումների քանակները: Արտանետումների ազդեցությունը գնահատելու համար կատարվել է դրանց ցրման արդյունքում սպասվող գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկ՝ «Эра» համակարգչային ծրագրով: Համաձայն հաշվարկների արդյունքների, արտանետվող նյութերի գետնամերձ կոնցենտրացիաների առավելագույն արժեքները

հաշվի առնելով նաև ֆոնային ցուցանիշները, չեն գերազանցում բնակավայրերի համար սահմանված ՍԹԿ-ները:

Հաշվի առնելով, որ Ընկերության գործունեության ընթացքում վնասակար նյութերի արտանետումներ և աղտոտված ջրերի արտահոսք դեպի ջրային ռեսուրսներ չի նախատեսվում, տնտեսական վնասը հաշվարկվել է միայն հողային ռեսուրսների վերաբերյալ, ինչը կազմում է 27731.4դրամ:

Ընկերությունը կիրականացնի շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ /հանքային ջուր, հողային ծածկույթ, մթնոլորտային օդ, կենսաբազմազանության/, որոնց իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 1 500 000 դրամ:

Նախատեսվող գործունեությունը իր դրական ազդեցությունն է ունենալու համայնքի սոցիալական հարցում: Բարձր գնահատելով ազդակիր համայնքի դերը գործարանի զարգացման մեջ՝ Ընկերությունը պատրաստակամ է շարունակել իր կորպորատիվ և սոցիալական քաղաքականությունը, համայնքի զարգացմանը տարեկան տրամադրելով մինչև մեկ միլիոն դրամ:

Եզրափակիչ մաս. Կոտայքի մարզի Բջնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 1/67 (2-ԷԿ կրկնորդ) և 8/69 հորատանցքերից հանքային ջրի արդյունահանման աշխատանքների և «ՌՌՌ» հանքային ջրերի շշալցման գործարանի ընդլայնման ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջներով: Գնահատման և փորձաքննության փուլերում գործունեության իրականացման վերաբերյալ Բջնի բնակավայրում անցկացվել են չորս հանրային քննարկումներ, որոնց ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Մասնակիցների կողմից կարևորվել է աշխատատեղերի ստեղծումը և Ընկերության կողմից՝ համայնքում սոցիալական ծրագրերի իրականացումը:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, Կոտայքի մարզպետարանը, տեղական ինքնակառավարման մարմինները, որոնց կողմից ներկայացված կարծիքներն ևս հաշվի են առնվել փորձաքննության գործընթացում և ՇՄԱԳ հաշվետվության լրամշակումներում:

Փորձաքննական պահանջներ

1. Հաստատված պաշարների քանակին, որակին և ռեժիմին համապատասխան հանքային ջրի արդյունահանումն իրականացնել՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 22 նոյեմբերի 2012թ. N 1484-Ն որոշման պահանջներով:
2. Ջրհավաք հորատանցքի առաջին խիստ ռեժիմի սանիտարական պահպանության գոտում և շշալցման գործարանի տարածքում իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մշտադիտարկումներ՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 2018թ. փետրվարի 22-ի N191-Ն որոշման և ոլորտի ՀՀ օրենսդրության պահանջներով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՌՌՌ» հանքային ջրերի գործարան ՓԲ ընկերության կողմից ներկայացված Կոտայքի մարզի Բջնիի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 1/67 (2-ԷԿ կրկնորդ) և 8/69 հորատանցքերից հանքային ջրի արդյունահանման աշխատանքների և «ՌՌՌ» հանքային ջրերի շշալցման գործարանի ընդլայնման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
առաջատար մասնագետ՝ Մ. Ավետիսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝ Հ. Մարտիրոսյան

Ընդամենը՝ 7 էջ: